Հետազոտական աշխատանք

Թեմա
Սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը իմ դասավանդման ժամանակ

Առարկա
Հայ գրականություն

Հեղինակ
Լուսինե Կիրակոսյան

Մարզ
Արագածոտն

Ուսումնական հաստատություն
Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջն. դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն---------էջ 1-2
2.Գլուխ Ա — Մարդասիրությունը որպես արժեքային համակարգ---------էջ 3-4
Գլուխ Բ — Բարոյականությունը որպես արժեքային համակարգ-------էջ 5-10
Գլուխ Գ — Հայրենասիրությունը որպես արժեքային համակարգ--------էջ 11-14
3.Եզրակացություններ և առաջարկություն--------էջ 15-16
4.Օգտագործված գրականություն--------էջ 16

Ներածություն

Հայ գրականություն առարկայի դասավանդման ժամանակ սովորողի մեջ պետք է ձևավորել արժեքային համակարգ: Դա կարևորագույն նպատակներից մեկը պետք է լինի: Գրականությունն այն առարկան է, որն ավելի լայն հնարավորություններ է ընձեռում անընդհատ վերլուծելու, համեմատելու և համադրելու պատկերներն ու երևույթները: Սովորողի մեջ արժեհամակարգը ձևավորվում է կրթությունից, հասարակության սովորույթներից, կենսափորձից և հավատքից:

Սովորողի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ՝ արժեհամակարգ:Շատ կարևոր է սովորողի մեջ ձևավառրել սեփական արժեհամակարգը, որը առաջնային նպատակներից մեկը պետք է լինի :

Արժեքային համակարգի կարևոր կետերից առանձնացրել եմ մարդասիրությունը, բարոյականությունն ու հայրենասիրությունը: Առարկան դասավանդելիս միշտ պետք է արդյունավետ և հանապատասխան վերլուծություններով և օրինակներով սովորողին հոգեհարազատ դարձնել գրականության դասաժամերը, որը կնպաստի նրա մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:

Ուսուցչի նպատակներից է սովորողի մեջ արժեհամակարգ ձևավորել գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով, որոնք արտացոլում են կյանքը: Ցանկալի է, որ յուրաքանչյուր սովորող ունենա մարդասիրության, բարոյականության և հայրենասիրության վեհ զգացումներ և գաղափարներ, որոնք կնպաստեն արժեհամակրգի ձևավորմանը: Առանց այս արժեքների սովորողը պետք է գիտակցի, որ կյանքը անհետաքրքիր և դատարկ կլինի:

Գալիք սերունդը պետք է կարևորի արժեքների իմաստը, որովհոտև դրանք հեշտությամբ չեն տրվում: Այն պետք է զգալ, վերապրել,գիտակցել:

Սովորողն ինքնիրեն պետք է կարողանա վերլուծել և իմանալ, որ արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց ստանում ենք իմաստներ քանի, որ արժեքներն են իմաստավուրում կյանքը:

Նպատակներից մեկն այն է ,որ այնպես պետք է ձևավորել այդ արժեքները, որ դրանք երբեք չփլուզվեն:

Սովորողի մեջ արժեհամակարգի ձևավորումը պետք է դառնա գլղավոր նպատակ : Այս ամենի արգասիքը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, բայց սովորողի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները:

Հայ գրականության յուրաքանչյուր թեմա հետապնդում է որևէ նպատակ՝ այն է, թե ինչ սովորեցի և ինչպիսի արժեքային համակարգ ձևավորեցի իմ մեջ:

Կյանքում հանդիպող ցանկացած խնդիր լուծելի է, եթե ունենք իրական և կայուն արժեհամակարգ ունեցող հասարակություն :

Այս ամենին հասնելու համար գրականությունն ունի առաջնակարգ դեր և նշանակություն՝ ի ցույց դնելով կյանքի լուսավոր և ստվերոտ կողմերը:

Խնդիրները

Ուսուցչի խնդիրն է ,որ սովորողը կարողանա ինքնուրույն գնահատել արժեհամակարգի կարևորությունն իր կյանքում և դրանք ցույց տա համապատասղան օրինակներով:

Ինքնուրույն և ստեղծագործական գործունեություն ունենալն այսօր խնդիր է:
Ուսուցչի խնդիրն է նաև վերլուծել և հասկանալ ընտանիքի ազդեցեությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում՝ զերծ պահելով կողմնակի վատ ազդեցություններից:

Այսպիսով, սովորեղի մետ պետք է կարևորել արժեքների ձևավորումը, որպեսզի վերջինս դրանց համապատասխանի:

Գլուխ Ա

Մարդասիրությունը՝ որպես արժեքային համակարգ

Արժեքային համակարգի կարևորագույն բաղադրիչներից է մարդասիրությունը: Սովորողի մեջ մարդասիրություն պետք է ձևավորել Միսաք Մեծարենցի «Ըլլայի՛ ըլլայի» շարքի բանաստեղծություններով:

Դրանցից յուրաքանչյուրում հեղինակը գտնում է այն անհրաժեշտությունը, որը պետք է մարդկանց սփոփելու, նրանց կյանքը գեղեցկացնելու համար:
Ինքնանվիրումի, ինքնաբաշխումի,մարդկանց նվիրվելու իղձը ավելի ցայտուն է արտահայտված «Իրիկունը», «Հովը», «Հյուղը» բանաստեղծություններում : Իրիկուն լինելու՝ բանաստեղծի ցանկության մեջ և՛ մարդկանց կյանքը գեղեցկացնելու, և՛ նրանց վիշտը կիսելու և ՛ սփոփելու, և ՛ իր մարդասեր էությունից նրանց ջերմություն բաժին հանելու խանդաղատագին զգացում կա.

Սա իրիկուն ես ըլլայի,
Թույլ նազենի, շղարշային, վարդաբույր
Ու ծփայի զերթ ոսկեսար վարագույր…

Հեղինակն ուզում է իրիկվա երանավետ անդորրին մասնակից դարձնել մարդկանց: Առավել կարևորը, ուրիշներին օգնելու մեջ ինքնիրեն մոռանալու, իրեն նվիրաբերելու ձգտումն է :

«Հովը» բանաստեղծության մեջ հեղինակն ընդարձակում է մարդկանց ուրախություն ու մխիթարություն տալու ցանկությունների շրջանակը՝ ստեղծելով նորանոր տեսիլներ:

Մեծարենցի մարդասիրական ձգտումները գաղափարական խորք ու արվեստի նոր որակներ են ստանում «Հյուղը» բանաստեղծության մեջ: Բանաստեղծը ո՛չ սովորական պահ է երազում, ո՛չ սովորական իրավիճակ: Մարդկանցից հեռու դաշտի ճամփի վրայի հյուղակ լինելու ցանկությունը ռոմանտիկ երազ է, որը թույլ կտար նրան պատսպարել ուշասացած ճամփորդին, ողողել նրան բարիքներով և հրավեր կարդալ բոլոր մենավոր, մրսած ու հանգստի կարիք ունեցող ճամփորդներին.

Հազար բարիք ես տայի,
Գոլը կրակին ճարճատուն,
Կուտքը բերրի դաշտերին,
Բոլոր միրգերն աշունի

Ու մեղր ու կաթ ու գինի…

Էջ 3

Կյանքի վերջին տարում գրած «Տու՛ր ինձի, Տեր…» բանաստեղծությունը մարդասիրական բովանդակությամբ և բանաստեղծական համապարփակ սիրով շարունակում է անանձնական տրամադրությունները:

Այս ստեղծագործությունն ավելի բազմաշերտ է և նրբերանգներով հարուստ.

Տու՛ր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական
Զանգակներու պես զայն կախեմ ամեն դըրան,
Ու զերթ նարոտ ամեն դըրան զայն պսակեմ…

Հատկանշական է., որ անանձնական ուրախության պահանջը բանաստեղծն ուզում է շատ զգուշությամբ կիրառել, որ չլինի, թե հանկարծ անպատեհ դառնա վիշտ ունեցող մարդու կողքին և խլացնի ուրիշի վիշտն զգալու ունակությունը, այսինքն թույլ չտա հաղորդակից դառնալ մարդկանց զգացումներին:

Նա ձգտում է լինել ծառ ու ծաղկի, լճի ու աղբյուրի, բնության համայնական ձայնը:

«Ինքը մահվան ճիրաններում սեղմված մտածում է բնության մաքրությամբ, նրա տրոփյունով, թռչունների երգով, մարդ-անցորդի, կյանք մտած ու հեռացող ճամփորդի տխրությունը փարատելու մասին: Ի՜նչ նազանքով ու փափկությամբ է նա մոտենում մարդու հոգուն

Մեծարենցն իր կարճ կյանքը շռայլաբար պատրաստ է նվիրաբերելու, մինչև անգամ հոգեվարքի շեմին գտնվող երիտասարդ աղջկան, նրա մարող ճրագը բոցավառելու իր ցոլքով»,- ասել է Մարի Ռոզ Աբուսեֆյանը:

Բանաստեղծի համար սեփական երջանկությունն ու ուրախությունը պայմանավորված են յուրաքանչյուրի և բոլորի երջանկությամբ: Սա է հումանիզմի բարձրագույն աստիճանը:

Անանձնական ուրախության պատգամախոսները երբեք չեն մեռնում, նրանց երթը հավետ է, և այդ երթը մեր գալիք սերունդների համար է: Մնում է սովորողի ներաշխարհը հարստացնենք նրանց տվածով և ձևավորենք արժեքային համակարգ:

Մեծարենցի բանաստեղծությունները մարդասիրական բարձր արժեք ներկայացնող գործեր են: Դրանց ուսուցման նպատակը ոչ միայն սովորեցնելն է, այլ սովորողի մեջ մարդասիրություն ձևավորելը:

Այսօր սովորողի մեջ մարդասիրություն ձևավորելն անհրաժեշտություն է, որովհետև նման արժեքային համակարգ ունեցող անհատը կարող է միշտ օգտակար լինել բոլորին: Իսկ այս ամենը կնպաստի մարդկանց բարյացակամ և հանդուրժող լինելուն:

Գրական ստեղծագործությունները կարող են սովորողի մեջ ձևավորել այդ մարդկային վեհ հատկանիշները:

Գլուխ Բ

Բարոյականությունը՝ որպես արժեքային համակարգ

Բարոյական արժեքներն այն գաղափարներն ու համոզմունքներն են, որոնք մարդիկ ունենում են վարքագիծ ցուցաբերելիս: Ասում են, որ մարդն ունի բարոյական արժեքներ, երբ ունի սովորույթներ և նորմեր, որոնք համարվում են դրական և լավ ուրիշների բարեկեցության համար:

Բարոյական արժեքների օրինակներ են առատաձեռնությունը, անկեղծությունը, հարգանքը, բարությունը: Սրանք վարք են, որոնք լավ են համարվում:

Հետևաբար այս տեսակի արժեքներ ունեցող անձը բարոյական է:

Բարոյական արժեքները դրանք բացարձակ արժեքներ են, որոնք կապվում են բարու և չարի հետ: Դրանց ձևավորումը վաղ տարիքից ուղղակիորեն ազդում է սովորողի վրա, ուստի արժեքները սովորաբար փոխանցվում են միջավայրի փորձի միջոցով, որում յուրաքանչյուր մարդ զարգանում է:

Յուրաքանչյուր անհատ ինքնուրույն որոշում է ապրել բարոյական արժեքների շրջանակի համաձայն, որպեսզի այդ որոշումն ընդունվի ազատ և անկախ: Բարոյական արժեքները բնութագրվում են, քանի որ դրանք անմիջականորեն կապված են մարդու էական հույզերի հետ:

Բարոյական արժեքները փոխանցվում են սերնդեսերունդ, ինչը կարևորում է կրթության կարևորությունը ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ դպրոցական միջավայրում, քանի որ երկու միջավայրներն էլ հանդիսանում են հիմնական ուսուցման օղակները:

Արժեքներն ազդում են սովորողի վարքի, առաջնահերթությունների, փոխհարաբերությունների վրա, ինչպես նաև այն բանի, թե բարոյական ինչ չափանիշներն ենք փոխանցում նրան:

Ու թեև բարոյական արժեքները կարևոր են, սակայն դրանք այսօր անկում են ապրում:

Բարոյական արժեք ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսոցումները, որոնք ապահովում են սովորողի բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական

արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով:

Էջ 5

Սուրբ Ներսես Շնորհալին «Հավատով խոստովանիմ» խորագրով իր աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ , չար խոսքեր:

Այսօր ոչ միայն մարդկանց հետ շփվելիս, այլ հաճախ համացանցից օգտվելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը:

Պետք է զգոն լինել առօրյայի ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում չընկրկելու համար:

Եվ, ինչպես Եղիշե պատմիչի խոսքերով, հոգին առավել է, քան մարմինը, այդպես էլ պետք է առավել ջանադրություն ցուցաբերել հոգևորի համար:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցության ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ:

Բարոյականությունը մարդու վարվելակերպի կարգավորման յուրահատուկ ձև է, կարգավորում է մարդու վարվելակերպը և գիտակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, աշխատանքում, կենցաղում, ընտանիքում, անձնական հարաբերություններում:

Բարոյական սկզբունքներն ունեն համընդհանուր նշանակություն և տարածվում են բոլոր մարդկանց վրա՝ ներշնչելով այն ընդհանուրը և հիմնականը, որը կազմում է միջմարդկային հարաբերությունների լուսավոր ու կայուն առանցքը և կուտակվում է հասարակության զարգացման բազմադարյան փորձում:

Բարոյական վեհ ու ազնիվ սովորողը ղեկավարվում է կյանքում, դառնում է կյանքի լավագույն արժեքների կրողն ու արարիչը իր գործունեությամբ: Իսկ բարիքները արտաքին և ներքին պայմաններն են, որոնք նպաստում են մարդու ինքնադաստիարակմանը, ինքնաարտահայտմանը: Արտաքին բարիքներ կարող են հանդիսանալ կրթություն ստանալու հնարավորությունները, մշակույթի օբյեկտները:

Ներքին բարիքները, առանց որոնց հնարավոր չէ մարդու երջանկությունը, նրա առողջությունն է , հոգևոր աշխարհի հարստությունը, ամբողջական, կայուն անձը, կյանքի նկատմամբ լավատեսական վերաբերմունքը:

Սովորողի բարոյական վարքը, նրա ապրումները, մղումները, գնահատվում են բարու և չարի չափանիշներով, պայմանավորված են մարդկային արժանիքների իրացմամբ:

Մարդու արժանիքների համակարգ կարող են համարվել աշխատանքը, ստեղծագործությունը, իսկ մյուսի համար անբանությունը:

Մարդն ընդունակ է ուրախացնելու, երբ նա հասել է անձի զարգացման բավական բարձր մակարդակի: Ասում են՝ կարեկցել կարող են մարդիկ, իսկ ուրախացնել՝ միայն հրեշտակները: Իրոք ուրախությունը շատ ավելի հազվադեպ է մարդկային հարաբերություններում, քան կարեկցությունը կամ խղճահարությունը:

Անվիճելի է այն, որ ընտանիքում և դպրոցում դրվում է սովորողի անձի հիմքը: Եվ՛ ընտանիքի, և՛ դպրոցի կարևորագույն պարտքն է սովորողի մեջ ձևավորելու բարձրագույն արժեքների աշխարհը՝ բարոյական բարձր նորմերով:

Եթե դասարանում իշխում է մարդասիրական փոխադարձ օգնություն, հարգանքի և հասկացողության մթնոլոր, բարենպաստ պայմաններ են ստեղծվում դրանց զարգացման համար:

Ուսուցիչը, ում առաքելությունը ապագա մարդու, քաղաքացու դաստիարակությունն է, սովորողի մեջ պետք է սերմանի բարություն, ազնվություն, ընկերասիրություն և ընդհակառակը՝ նրանց մեջ սպանի եսակենտրոն բոլոր մղումները:

Բարոյական դաստիարակության դերը կարևորվում է նաև մեր օրերում: Անգլիացի մանկավարժ Պաուր Խուեհինի համոզմամբ, ներկայումս «Հասարակության մեջ անհամեմատ շատ են բռնությունները և խարդախությունները, գրեթե ամենուր սովորողները իրական և վիրտուալ կյանքում բախվում են անարդարություններիի, խարդախությունների»:

Բարոյական դաստիարակությունն անձի բարոյական զարգացումն է: Սովորողի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում, եթե չկա նյութական, բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հոգուտ հասարակության և հոգուտ մարդու:

Բարոյական արժեքներով դաստիարակված սովորողը կլինի առաքինի և բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Պետք է այնպիսի աշխատանք տանել սովորողի հետ, որ նա հասարակության համար անտանելի բեռ չդառնա:

Հեգելը գրում է. «Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում, երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը»:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, սովորողի մեջ ձևավորի բարոյական հասկացությունները, ճիշտ ըմբռնելու կարողություններ:

Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները: Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար, կարդացված վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Բարոյական թեմայով բանավեճի նյութ կարող է լինել շրջապատի կյանքի առօրյան, հասարակության զարգացմանը խոչընդոտող պատճառները, սոցիալական անարդարությունները, մեծ իրադարձությունների պատճառների բացահայտումը և այլն:

Հմուտ ուսուցիչը, օգտագործելով բոլոր հնարավորությունները, սովորողին կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով: Այդ նպաակով պետք է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր: Ուսուցիչը սովորողին պետք է օգնի և նպաստի բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ հաղորդի:

Այսօր մատաղ սերնդի բարոյական դաստիարակությունը հասարակության հիմնական մտորումներից է: Սովորողը մտնում է բարդ բազմակողմանի աշխարհ, որում հանդիպում է ոչ միայն բարու և արդարության, հերոսության և նվիրվածության, այլև դավաճանության, անազնվության և անձնական շահերի: Անհրաժեշտ էկրթել և ձևավորել սովորողի աշխարհայացքը, երբ նրա կյանքի փորձը դեռ նոր է սկսում կուտակվել: Դպրոցական տարիներին է որոշվում սովորողի կողմնորոշումը, ի հայտ են գալիս առաջին բարոյական վերաբերմունքներն ու տեսակետները:

Ներկա փուլում հասարակությունը զբաղված է շուկայական հարաբերությունների, տնտեսական անկայունության, սոցիալական բարդությունների, սոցիալական կապերի և բարոյական հիմքերի քայքայման խնդիրներով: Սա հանգեցնում է մարդկանց

անհանդուրժողականության և դառնության, քայքայում է անհատի ներքին աշխարհը: Ահա թե ինչու դպրոցը, լուծելով դաստիարակության խնդիրները, պետք է հենվի սովորողի բարոյականության վրա, օգնի յուրաքանչյուրի որոժել իր կյանքի արժեքային հիմքերը, պատասխանատվության զգացում ձեռք բերել հասարակության բարոյական հիմքերը պահպանելու համար: Դրան կօգնի բարոյական կրթությունը, որը օրգանապես հյուսված է կրթական գործընթացի մեջ և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Պետք է պատրաստել պատասխանատու քաղաքացի, ով կկարողանա ինքնուրույն գնահատել տեղի ունեցողը և իր գործունեությունը կառուցել իր շրջապատի մարդկանց շահերին համապատասխան:

Կրթության բովանդակության նորացման գիտական հիմնավորումը հիմնված է զարգացման կրթության ժամանակակից գաղափարի վրա, որպես որոշակի հմտությունների կրող, կրթական գործունեության առարկա, ով կարողանում է երկխոսության մեջ մտնել տարբեր մշակույթների տարրերի հետ:

Հասարակության սոցիալապես ակտիվ անդամներին կրթելու համար անհրաժեշտ է վերապատրաստել լայն կիրթ, բարձր բարոյականություն ունեցող մարդիկ, ովքեր ունեն ոչ միայն գիտելիքներ, այլև գերազանց անհատականության գծեր:

Վ. Ա. Սուխոմլինսկին կարծում էր, որ «բարոյական համոզման անսասան հիմքը դրված է մանկության և վաղ պատանեկության տարիներին, երբ բարին և չարին, պատիվն ու անպատվությունը, արդարությունը եվ անարդարությունը հասանելի են սովորողի հասկացողությանը միայն վառ հստակության, դրա բարոյական նշանակության ապացույցի պայմանով»: Նա տեսնում է, անում է, դիտում է:

Դպրոցը երիտասարդ սերնդի դաստիարակության համակարգի հիմնական օղակն է: Սովորողի կրթության յուրաքանչյուր փուլում գերակշռում է դաստիարակության սեփական կողմը: Բարոյական հասկացությունների բովանդակային կողմը պայմանավորված է գիտական գիտելիքներով, որոնք ստանում են ակադեմիական առարկաներ ուսումնասիրելով:

Բարոյական կերպարի ձևավորումը տեղի է ունենում սովորողների բոլոր բազմակողմանի գործունեության ընթացքում, իրենց հասակակիցների հետ իրավիճակներում, իրենցից փոքր երեխաների և մեծահասակների հետ: Այնուամենայնիվ, բարոյական դաստիարակությունը նպատակաուղղված գործընաց է, որը ենթադրում է մանկավարժական գործողությունների բովանդակության, ձևերի, մեթոդների և տեխնիկայի որոշակի համակարգ:

Բարոյական զարգացման գործընթացի էական օղակը բարոյական լուսավորությունն է: Դրա նպատակն է սովորողին իրազեկել հասարակության բարոյական սկզբունքների և նորմերի մասին, որոնց նա պետք է տիրապետի: Բարոյական սկզբունքների և նորմերի իրազեկումն ու փորձը անմիջականորեն կապված է բարոյական վարքի ձևերի իրազեկման հետ և նպաստում է բարոյական գնահատականների և գործողությունների ձևավորմանը:

Առանց բարոյական արժեքների կայուն համակարգի ո՛չ գյուղը, ո՛չ քաղաքը, ո՛չ մեր երկիրը չեն գոյատևի:

Բարոյապես դաստիարակվել նշանակում է հարգել բոլորին, ովքեր աշխատում են, ինքդ քեզ լավ աշխատել, ամեն ինչում ակտիվ լինել, լինել ստեղծագործ, փորձել որքան հնարավոր է շատ օգուտ բերել, լինել ազնիվ, արդար, անհամբեր դաժանության, չարության և անձի նվաստացման բոլոր ձևերի նկատմամբ:

Բարոյականության հիմքը մարդկության մեջ է, բարության մեջ: Բարություն մշակելիս պետք է իմանալ, որ այն մարդը, ով իր վրա զգացել է ուրիշների բարությունը, դառնում է ավելի լավը, ավելի արձագանքող ուրիշի դժբախտությանը:

Բարոյական կրթությունը սովորողի անհատականության ձևավորման և զարգացման ամենակարևոր կողմն է և ներառում է ծնողների, մյուսների աշխատանքի իր պարտականությունների և ինքն իր հետ հարաբերությունների ձևավորումը:

Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման այսօր էլ ասելիք ունի: Այն այսօր էլ արդիական է, պատվի, արժանապատվության, բարոյականության և համամարդկային այլ մնայուն արժեքների հետ միասին:

Սովորողը դրամայի այուժեյին ծանոթանալուց հետո դիտում է ֆիլմը և իր սեփական կարծիքն արտայտում՝ այն համեմատելով այսօրվա հետ:

Դրամայի բարոյահոգեբանական բովանդակությունն ավելի է խորանում, երբ երկատված է մարդը և ընդդիմանում են օբյեկտիվ պայմանների պահանջն ու սուբյեկտիվ մղումը կամ խիղճը:

Սովորողը պետք է կարողանակ ճիշտ եզրահանգումների գալ և զատել անարդարն ու ազնիվը, ինչպես նաև բարոյականն ու անբարոն:

Սովորողի մեջ բարոյականությունը՝ որպես արժեքային համակարգ, անհրաժեշտ է ձևավորել նաև նման ստեղծագործությունների միջոցով՝ վերլուծելով կյանքի բոլոր կողմերը:

Շատ կարևոր է, որ ուսուցիչը սովորողի մեջ այնպես ձևավորի «բարոյականություն» ասվածը, որ դա երբեք չընկրկի նրա կյանքում:

Գլուխ Գ

Հայրենասիրությունը՝ որպես արժեքային համակարգ

«Հայ գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում արժեքային համակարգիկարևոր առանձնահատկություններից է հայրենասիրությունը, որը սովորողի մեջ պետք է ձևավորել դեռևս վաղ տարիքից:

Սովորողի վերաբերմունքն իր երկրին կախված ք հայրենասիրության զգացումից: Հայրենասիրությունը նվիրվածություն և սեր է մր հայրենիքի հանսեպ, մեր ժողովրդին:

Հայրենասիրության բարձր մակարդակի վառ օրինակ է Արցախյան 44- օրյա պատերազմը, որը լիովին սովորողների մեջ ձևավորեց արժեքային համակարգ: Այն սոսկ հայրենասիրական դաս չէ: Այն արժեքների ու բարոյականության դաս է: Հայրենքի ու հավատք, լեզու և մշակույթ, ընտանիք և օջախ, այս անփոխարինելի այուների վրա է հենվում մեր ինքնությունը դարեր շարունակ:

Սովորոմղի մեջ հայրենասիրությունը որպես արժեքային համակարգ ձևավորվում է հենց հայ դասականների ստեաղծագործությունների միջոցով: Սովորողը ծանոթանալով Հ. Ճիրազի հայրենսահիրական մոտիվներով գրված բանաստեղծությունների, երբեք չի կարող անտարբեր լինել, որովհետև դրանց մեջ արտացոլված են մեր ժողովրդին բաժին ընկած դառը ճակատագիրը, պատմական անարդարությունները, բիբլիական Մասիսն ու կոստյան մատնված հայրենիքը:

Սովորողն իր սեփական վերլուծույունն է անում յուրաքանչյու բանաստեղծության և քառատողի շուսրջ: Հեղինակի համար առաջնայինը ազգային համախմբվածությունն է.

Ճիրազն ասաց. «Մասիսն է այունն Հայաստանի»,
Հայեր ձգող մագնիս է ձյունն Հայաստանի,
Բա՛վ է հայեր ցրված մնաք մատներիս պես,
Բռունցքվելն է հավերժությունն Հայաստանի…

Պետք է տարբերել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է պետական միաբանության ապահովումը:

Սովորողը պետք է կարևորի համախմբված լինելու անհրաժեշտությունը որևէ գաղափարի շուրջ, հատկապես այն ժամանակ, երբ ազգը դրա կարիքն ունի:

Հայրենասիրությունը ամենավեհն է բոլոր արժեքներից, որով պետք է տոգորվի սովորողը:

Ճիրազի բազմալար քնարերգության հնչող թեմաներից մեկը հայրենիքն է ու հայրենասիրությունը: Նա վստահ էր, որ ազգային զարթոնքը սկսվելու է հենց Ղարաբաղից: Որպես արդիական թեմա պետք է ընթերցել «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով հետևյալ հատվածին.

Դու էլ դարձած կռվածաղիկ,
Իմ բալիկն ես ա՛յ Ղարաբաղ,
Մեղրդ օտար մեղվին տվող
Իմ ծաղիկն ես ա՛յ Ղարաբաղ,
Հայաստանից քեզ պոկողը,
Հայաստանի եղբայրը չէ՛,
Էլ չեմ կարող վիշտս լռել,
Վա՛յ ինձ ու քեզ, հա՛յ Ղարաբաղ…

Հատվածն ընթերցելուց հետո պետք է արժևորել Ճիրազի գրական մեծությունը, ցույց տալով, որ հեղինակը տեղին է գործածել «կռվածացիկ» բառը՝ մեծ սեր ու հուզեր արթնացնելով ընթերցողի հոգում: Բանաստեղծության մեջ հեղինակը վեր է հանել ոչ միայն իր, այլև բոլորիս համակած ցավն ու պահանջատիրության զգացումը.

Ճիրազն ասաց՝ աշխարհն անցնի՝
Հայ գալիք ես, հա՛յ Ղարաբաղ…

Հայրենիքի հետ կապի զգացումը և նրան նվիրվածությունը հիմնված է պատասխանատվության ավանդական հնագույն հմտությունների վրա: Ծառայել ազգի շահերին (ներառյալ պետության ֆիզիկական, տարածքային, քաղաքական, մշակութային ամբողջականության պաշտպանությունը, ազգի պահպանումը):

Հայրենասիրությունը կապված է առաջին հերթին յուրաքանչյուր մարդու, սովորողի և ընդհանուր առմամբ հասարակության միակ և գերագույն նպատակի հետ՝ պետության շահերը և ազգային անվտանգությունը առաջնահերթ սկզբունքներ պետք է լինեն:

Հայրենասիրությունը դռսևորվում է կարողության մեջ արժեվորել ու փայփայել քո հայրենիքը, այն դեպի լավը փոխելու, ավելի մաքուր, բարի, գեղեցիկ դարձնելու ցանկությունը:

Էջ 12

Սովորողի մեջ պետք է ձևավորել կարողություն՝ պաշտպանելու մեր երկրի արժեքները, առաջին հերթին՝ ազատությունն ու անկախությունը, ինչպես նաև արգելու ու պահպանելու դարավոր ավանդույթները: Այնտեղ, որտեղ մոռացության են մատնվում երկրի մշակութային ու պատմական անցյալը, ամփոփոխ կերպով սկսվում է ազգի բարոյական անկումը:

Հայրենասիրությունը հպարտություն է սեփական ժողովրդի բոլոր ձեռքբերումներով և նրա բոլոր պատմական սխալների գիտակցումով:

Հ. Ճիրազի ստեղծագործության մեջ ներշնչանքի աղբյուր է նաև բիբլիական լեռ հիշեցնող Մասիսն իր վեհությամբ և շքեղությամբ: Եվ պատահական չէ, որ «Կտակ» բանաստեղծության մեջ հեղինակը որդուն ոչ թե գանձեր է կտակում, այլ հայ ժողովրդի սրբազան լեռը՝ Մասիսը:

Թեման ոչ միայն ոգեշնչող է, այլև հայրենասիրական վեհ զգացումներ առաջացնող.

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,

Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան…

Մասիսն իսկական արժեք է ոչ միայն Ճիրազի, այլև յուրաքանչյուր հայի համար: Հենց դա պետք է սովորեցնել: Լեռն իր վաղեմությամբ արժեքային համակարգ է ձևավորում սովորողի մեջ՝ վեր հանելով ազգային պահպանելու և պահանջելու գաղափարը, ինչպես նաև գեղեցիկն ու վսեմը ճանաչելու և գնահատելու կարողունակություն:

Մի առիթով Վ. Սարոյանն ասել է . «Ճիրազի անունը լսելիս պետք է ոտքի կանգնել և անընդմեջ ծափահարել: Այդպես է, որովհետև հայրենիքի մի հերոս էլ Ճիրազն էր»:

Փաստենք, որ հայրենասիրական դաստիարակությունն ուղղված պետական քաղաքականությանը որոշակի պայմաններում կարող է նպաստել հասարակության համախմբմանն ու երիտասարդ սերնդի քաղաքացիական գիտակցության ձևավորմանը:

Հայրենասիրությունը դրսևորվում է կարողունակության մեջ արժևորել ու փայփայել քո հայրենիքը, այն դեպի լավը փոխելու, ուժեղ և հզոր դարձնելու ցանկությունը:

Գալիք սրնդի մեջ պետք է ձևավորել արժեքային համակարգ, որպեսզի սովորողը դրանց համապատասխանի:

Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է: Նշանակում է՝ հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են

երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ հայրենիք»:

Էջ 13

Դպրոցը և ուսուցիչները պարտավոր են ձևավորել սովորողների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատալ վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ:

Հայրենասիրական արժեքների ձևավորում ու զարգացումը մանավանդ համագործակցային ուսուցման դրույթների կիրառման, խմբային աշխատանքներով տանում է սովորողի սոցիալականացման: Ողջ ընթացքն ի վերջո հանգում է նրան, որ անհատը անձ է դառնում՝ ձեռք բերելով հասարակական պատմական փորձը, այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը:

Դպրոցում պետք է կարևորել հայրենասիրությունը, որպես վեհ արժեք, ուսուցիչը սովորողներին ներգրավում է հասարակական կյանք, նրան դարձնելով հայրենիքի լիիրավ պաշտպան:

Հայրենիքը հենց այն է, որ անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

Չափազանց կարևոր, արդիական և անհրաժեշտ է այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որտեղ սովորողները հավասար հնարավորություն ունենան մասնակցելու թեմաների վերլուծություններին: Հենց սրանով էլ պայմանավորված է սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական գործընթացի կազմակերպումը, որի ընթացքում ի հայտ են գալիս անշահախնդրությունն ու անմնացորդ նվիրումը:

Պլատոնն ասել է. «Եվ՛ պատերազմու, և՛ դատավորության ժամանակ, և՛ ամենուր դուք պետք է անեք այն, ինչ պատվիրում է հայրենիքը»:

Էջ 14

Եզրակացություններ և առաջարկություններ

Շարունակական կրթության համակարգում դպրոցի կարևորությունը որոշվում է ոչ միայն կրթության այլ օղակների հետ, դրա շարունակականությամբ, այլև սովորողի անհատականության ձևավորման և զարգացման յուրահատուկ արժեքներով:

Սովորողի բազմակողմանի զարգացման ընդհանուր համակարգի հիմնական առանցքը բարոյական կրթությունն է: Բարոյական կրթությունը գործընթաց է, որն ուղղված է սովորողի անբաժանելի անձի ձևավորմանը և զարգացմանը և ներառում է նրա հարաբերությունների ձևավորումը հայրենիքի, հասարակության, կոլեկտիվի, մարդկանց, աշխատանքի, պարտականությունների և ինքն իր հետ:

Արժեքային համակարգը սովորողին հնարավորություն է տալիս ճիշտ վերլուծելու, համեմատելու և գնահատելու մարդկային կյանքը:

Ոչ միայն սովորողը, այլ մարդն իր ամբողջ կյանքում պետք է արժևորի թե՛ բարոյականությունը, թե՛ մարդասիրությունը, և թե՛ հայրենասիրությունը: Սրանք այն արժեքներն են, որոնք երբեք չեն կորցնում իրենց նշանակությունն ու դերը մարդու կյանքում:

Սովորողի արժեքային համակարգի ձևավորմանը պետք է նպաստի և՛ ծնողը, և՛ ուսուցիչը: Ուսուցչի նպատակն է սովորողի մեջ սերմանելու հայրենասիրական վեհ զգացումներ հեղինակների ստեղծագործությունների միջոցով, որոնք կարժեքավորեն նրանց կյանքը: Նրանք իրենց ամբողջ կյանքում պետք է կարողանան դիմակայել ժամանակի փորձություններին: Իսկ այս ամենին հասնելու համար պետք է ունենալ բարոյական արժեքներ:

Սովորողը պետք է կարողանա յուրացնել և կիրառել ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողունակությունները կյանքում: Սովորողը պետք է կարողանա ցույց տալ և հիմնավորել ասելիքը: Նա պետք է կարևորի այն, որ մարդկային արժանիքները հիշվում են և փոխանցվում են սերնդեսերունդ:

Սովորողը կկարողանա տարբերել լավն ու վատը, կիմանա, թե ինչ է մարդասիրությունը, ազնվությունը, բարոյականությունն ու հայրենասիրությունը: Եվ

վերջիվերջո, նա կդառնա պայքարող անհատ և հասարակության լիիրավ և օգտակար գործունեություն ծավալող քաղաքացի:

Այս արժեքները սովորողի մեջ պետք է այնպես ձևավորել, որ դրանք երբեք չփլուզվեն:

Էջ 15

Սովորողը կձևավորվի որպես բարոյականության վեհ հատկանիշներ ունեցող մարդ, կարժևորի մարդասիրությունն ու հայրենասիրությունը՝ որպես բարձրագույն արժեք:

Միայն այդ ժամանակ մեր առջև դրված նպատակներն ու խնդիրները լուծելի կդառնան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յ. Ս. «Մանկավարժություն»
2. Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն»
3. Բալյան Ա.- Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները, Երևան, 1982
4. Սիմոնյան Ճ. Ս. - «Մանկավարժական տակտ», 1980

Էջ 16